reArmenia

UNITE TO REVIVE

Համագործակցության և դրամահավաքի հարթակ

ռեԱրմենիան համագործակցության ու դրամահավաքի հարթակը ստեղծվել է աշխարհի տարբեր անկյուններում գտնվող հայերի ներուժը միավորելու ու բոլորիս արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար:

Հարթակը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուրին բարձրաձայնել Հայաստանի խնդիրները, ինչպես նաև առաջարկել այդ խնդիրները լուծող նախագծեր, կիսվել փորձով, հմտություններով կամ ֆինանսական և նյութական ռեսուրսներով: ռեԱրմենիան իր հերթին ստեղծում է միջավայր փոխադարձ վստահության և թափանցիկության ապահովման համար, որն արդյունավետ համագործակցության հիմքն է:

reArmenia-ն նախաձեռնել են

TUFENKIAN FOUNDATION

tun Techնոտուն Club

the CROWDFUNDING formula

merakipal

Backbone branding

GlobalAM advice and support

reA

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խնդիր

Մի կողմից կան մարդիկ, որոնք՝

- հստակ տեսնում են Հայաստանի խնդիրները, բայց չունեն լուծումներ և համապատասխան թիմ կամ փորձառություն՝ հարցին լուծում տալու համար,

Մյուս կողմից կան մարդիկ, որոնք՝

- ունեն լուծումներ, ձևավորել են թիմեր և արդեն աշխատանքներ են նախաձեռնել, բայց չեն գտնում անհրաժեշտ աջակցությունը,
- աջակցելու նպատակով փնտրում են վստահելի, բանիմաց և նախաձեռնող մարդկանց։



Լուծում

- Բոլոր նախագծերը և նախաձեռնությունները մեկ միացյալ հարթակում
- Նախագծերի խորը հետազոտում մասնագիտական խմբերի կողմից
- Ուղիղ կապ նախագծերի և նախաձեռնությունների հեղինակների հետ
- Ամենամսյա հաշվետվություններ՝ ֆինանսական ու առաջադիմային

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարթակում բարձրացվում են Հայաստանում առկա խնդիրները՝ լուծումներ և լուծողներ գտնելու նպատակով: Խնդիրները ներկայացվում են որպես «Նախաձեռնություններ», որոնց ամբողջ աշխարհից միանում են մարդիկ՝ որպես «Իրագործողներ» և «Համագործակցողներ»: Խնդիրը ներկայացնելուց տվյալ ոլորտի հետ կապ ունեցող անհատներին և կազմակերպություններին ծանուցում է ուղարկվելու, համագործակցությունը սկսելու նպատակով:

01

Նախաձեռնողները

մարդիկ են կամ կազմակերպություններ, որոնք առնչվել են խնդրին, ծանոթ են դրա մանրամասներին և հանրայնացնում են այն՝ տեղադրելով հարթակում:

02

Իրագործողները

մարդիկ են, որոնք, խնդրի մասին տեղեկանալով, ունենալով համապատասխան գիտելիք և հմտություններ պատրաստակամություն են հայտնում կազմակերպել խնդրի լուծումը:

03

Համագործակցողները

մարդիկ կամ կազմակերպություններ են, որոնք պատրաստ են աջակցել խնդրի լուծմանը՝ գիտելիքով, հմտություններով, կապերով կամ այլ ռեսուրսներով, ծառայություն մատուցելով և այլն:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հայաստանում առկա խնդիրների լուծմանն ուղղված նախագծերը բարերարներից աջակցություն ստանալու նպատակով ներկայացվում են հանգանակությունների բաժնում, ստանում անհրաժեշտ հանգանակությունները և կյանքի կոչվում՝ բարերարներին և հանրությանը պարբերաբար հրապարակային հաշվետվություններ տրամադրելով: Մինչև հարթակում հայտնվելը նախագիծը, նախաձեռնող կազմակերպությունը կամ անհատը անցնում են մանրակրկիտ ստուգում:

Նախագծերի ստուգման ընթացակարգ

01

Նախնական զննում

Ստացվում է նախագծի հայտը և ստուգվում է տվյալների ադեկվատությունը:

02

Նախագծերի համակարգում

Ստուգվում է տվյալների ամբողջականությունը և նախագծի համապա-տասխանությունը սահմանված ոլորտներին:

03

Վստահության և ապահովության բաժին

Ստուգվում է տվյալների հավաստիությունը, ստուգվում է բյուջեն, մատակարարներին և սահմանված արժեքները:

04

Ոլորտային խորհրդատվական խումբ

Հաստատում է նախագծի կողմից լուծվող խնդրի առկայությունը, լուծման լավագույնը լինելն ու թիմի համապատաս-խանությունը:

05

Հոգաբարձուների խորհուրդ

Հաստատում է նախագիծը և դրա ներկայացման նյութերը, որից հետո նախագիծը տեղադրվում է հարթակում:

Ապահովություն և վստահություն

Նախագիծը ներկայացնելուց առաջ մասնագիտական խորհրդատվական խումբը ստուգում է, արդյոք ներկայացված խնդիրն իսկապես առկա է և արդյո՞ք ներկայացված է համապատասխան լուծում, թիմ և այլն: Այնուհետ, ապահովությունը երաշխավորելու համար Վստահության և ապահովության բաժինը ստուգում է՝

- նախաձեռնողի կանոնադրական փաստաթղթերը
- նախաձեռնող կազմակերպության լիկվիդացման, վերակազմակերպման կամ սննկացման գործընթացների առկայությունը
- ներկայացված բյուջեն՝ միջոցների նպատակային և արդյունավետ ծախսման տեսակետից
- Բաց աղբյուրներում նախաձեռնողի մասին բացասական տեղեկատվության առկայությունը
- բոլոր անհրաժեշտ լիցենզիաների, վկայությունների, թույլտվությունների առկայությունը
- շահերի բախման առկայությունը՝ ռեԱրմենիա-ի աշխատակիցների խորհրդատվական մարմնի, հոգաբարձուների մասով
- Նախաձեռնողի կողմից նախագծում ներառված գույքի օգտագործման իրավունքը
- Այլ ստուգումներ՝ ըստ անհրաժեշտության

Նախագծերի հաշվետվողականություն

Բոլոր նախագծերը պարտադիր ներկայացնում են ամսական երկու հաշվետվություն՝ ֆինանսական և առաջադիմության:

01

Ֆինանսական հաշվետվություն

Ներառում է մանրամասն տեղեկություն այն մասին, թե

- որքա՞ն ֆինանսական աջակցություն են ստացել,
- որտեղի՞ց են ստացել աջակցությունը,
- ի՞նչ ուղղություններով են ծախսել:

02

Առաջադիմության հաշվետվություն

Ներառում է նախագծի վրա կատարած աշխատանքները ներկայացնող

- տեսանյութեր,
- լուսանկարներ,
- տեքստեր,
- ՁԼՄ-ներում հրապարակումներ:

reArmenia-ի հոգաբարձուների խորհուրդը

Դավիթ Հակոբյան

ռեԱրմենիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Նախկին ՄԱԿ-ի պաշտոնյա

Արմինե Մկրտչյան

Տնօրեն
Meraki Pal

Գրեգ Բեդյան

Օպերացիոն տնօրեն
Թուֆենկյան Հիմնադրամ

Մարիամ Համբարձումյան

Նախագահ
Գլոբալ էյէմ

Նարեկ Վարդանյան

Տնօրեն
TCF

reArmenia-ի առաջատար խորհրդատուները

Արամ Փախչանյան

Կրթության խորհրդատվական խումբ
Ayb Foundation

Արմեն Մարտիրոսյան

Առողջապահության **խորհրդատվական խումբ**
HFC

Զարմինե Զեյթունցյան

Զբոսաշրջության խորհրդատվական խումբ
AUA

Հրանտ Խաչատրյան

Գիտության խորհրդատվական խումբ
YerevaNN

Սամվել Գևորգյան

Մարզային զարգացման խորհրդատվական խումբ
BSC

Վարդան Ուռուտյան

Գյուղատնտեսության խորհրդատվական խումբ
Rector at ANAU

reArmenia-ի հիմնական թիմը

Գևորգ Պողոսյան

Գլխավոր տնօրեն

Արտակ Գրիգորյան

Գործառնական տնօրեն

Սարգիս Թադևոսյան

Վստահության և Ապահովության տնօրեն

Անժելա Ալեքյան

Հասարակայնության հետ կապերի մասնագետ

Գայանե Գևորգյան

Հաղորդակցության բաժնի պատասխանատու

Մարգարիտա Հովհաննիսյան

Մարդկանց և մշակույթի պատասխանատու

Մարիամ Վարդանյան

Տնօրենի օգնական

Մարիամ Քոչարյան

Հասարակայնության հետ կապերի մասնագետ

Նաթելլա Ավանեսյան

ինֆլուենսերների հետ հաղորդակցության մասնագետ

Նաիրա Հունանյան

Սոցիալական մեդիաների մասնագետ